

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 57/11

Քաղ. Երևան

20 դեկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) Ա. Հ. Աբգարյան իր 2011թ. դեկտեմբերի 20-ի նիստում (արձանագրություն N 8.1) քննարկեց «Նեքսթ Ռիթեյլ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի կողմից 2011թ. հունիսի 27-ին ներկայացված «NEXT» (հայտի համարը N 20090648) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Կրկնական փորձաքննության արդյունքում ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը մասնակի մերժման որոշում է կայացրել «NEXT» նշանի վերաբերյալ՝ գրանցելով այն 9-րդ, 14-րդ, 18-րդ և 35-րդ դասերի համար, սակայն մերժելով 35-րդ դասի ծառայությունների համար «Bayer Motoren Werke Aktiengesellschaft» ընկերության «MINI NEXT» ապրանքային նշանի N 795198 նույնատիպ միջազգային գրանցման առկայության պատճառով:

Բողոքարկողը համաձայն չէ կրկնական փորձաքննության որոշման հետ և բողոքի մեջ ներկայացրել է իր փաստարկները: Բողոքում նշված է, որ «NEXT» և «MINI NEXT» N 795198 նշանների առաջին իսկ հայացքից աչքի ընկնող տարբերությունը կայանում է դրանց գրաֆիկական կազմության մեջ, որից էլ բխում են նշանների հնչյունային և իմաստային տարբերությունները: Մերժված նշանն իրենից ներկայացնում է լատիներեն այբուբենի մեծատառերով կազմված մեկ բառից բաղկացած բառային նշան «NEXT» արտասանվում է նեքսթ և թարգմանաբար նշանակում հաջորդ, մինչդեռ հակադրվածը նույն այբուբենի մեծատառերով կազմված երկու բառից բաղկացած արտահայտություն է «MINI NEXT», որն արտասանվում է մինի նեքսթ և նշանակում փոքր հաջորդը: Նշված է, որ գրաֆիկական,

հնչյունաբանական և իմաստային տեսակետերից բառի ու արտահայտության տարբերության հանգամանքը բավական մեծ դեր է կատարում նշանների տարբերակման ժամանակ, քանի որ դրանց ընկալումը սպառողի կողմից միանգամայն տարբեր կերպ է իրականացվում:

Բողոքում նշված է, որ «MINI NEXT» արտահայտության մեջ առաջնային դիրք է զբաղեցնում «MINI բառը՝ թուլացնելով «NEXT» բառի ընկալումը:

Բողոքում նշված է նաև, որ «Bayer Motoren Werke Aktiengesellschaft» ընկերությունը մասնագիտացված է հիմնականում տրանսպորտային միջոցների, դրանց մասերի և կցամասերի արտադրության մեջ: Ուստի ելնելով դրանից, ինչպես նաև «MINI NEXT» N798198 գրանցմամբ առաջարկվող ապրանքների և ծառայությունների ցանկից երևում է, որ տվյալ ընկերության հիմնական ծառայությունները, այն է մանրածախ վաճառքը (հակադրված հայտարկվող նշանին), ապահովագրական և ֆինանսական ծառայությունները, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունները, տրանսպորտի ապահովումը, դրանց վարձույթը, դրանց ստուգման և գնահատման ծառայությունները բոլորն ուղղված են ավտոշինական ոլորտին:

Նշված է նաև, որ ի տարբերություն «MINI NEXT» ապրանքային նշանի, «NEXT» ապրանքային նշանի հայտատու ընկերությունն իր գործունեությունը ծավալում է բոլորովին այլ բնագավառում, առաջարկելով տարբեր տիպի ակնոցներ, ազնիվ մետաղներից պատրաստված բազմապիսի իրեր, կաշվից արտադրանք և այլն: Ուստի մանրածախ առևտրի ծառայություններն առաջարկվում են վերոհիշյալ ապրանքների, ինչպես նաև հագուստեղենի, կոշիկեղենի, գլխարկների, նորածնության այլ իրերի, նաև կահույքի, խաղալիքների, էլեկտրական ապրանքների վաճառքին: Այսինքն հայտատուն առաջարկում է ընդհանուր, առօրյա օգտագործման ապրանքների վաճառքի և խթանման այլ ծառայություններ:

Բողոքարկողը նշում է, որ երկու ապրանքային նշանների սպառման ոլորտները միանգամայն տարբեր են, և տվյալ հանգամանքը անկասկած զերծ կպահի որևէ շփոթությունից: Այսինքն ավտոմեքենա կամ դրա մաս գնող, ավտոմեքենա ապահովագրող կամ վերանորոգող անձը երբևէ չի այցելի ընդհանուր ապրանքների սպառման խանութներ, այլ կդիմի խիստ մասնագիտացված սրահների կամ գրասենյակների օգնությանը: Հետևապես նման դեպքում շփոթելը սպառողի կողմից բացառվում է: Եվ պետք է նկատել ևս մի կարևոր հանգամանք, որ թե՛ «Bayer Motoren Werke Aktiengesellschaft» ընկերությունը և թե՛ «Նեքսթ Ութեյլ Լիմիթիդ» ընկերությունը քաջ հայտնի են ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում իրենց արտադրանքով և մատուցվող ծառայություններով, որոնց շփոթելը պարզապես անհնար է:

Բողոքարկողը իր բողոքում խնդրել է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել 20090647 հայտով «NEXT» ապրանքային նշանը ՀՀ տարածքում նաև 35-րդ դասի բոլոր ծառայությունների նկատմամբ:

Բողոքը ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. հունիսի 27-ին «Նեքսթ Ռիթեյլ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի կողմից ներկայացվել է «NEXT» (հայտի համարը N 20090648) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Նախորդ նիստերում համառոտ ներկայացվել էր մերժման հիմքերը և բողոքի քննարկումը հետաձգվել էր բողոքարկողի խնդրանքով՝ լրացուցիչ նյութեր տրամադրելու նպատակով:

Բողոքարկման խորհուրդը, ընդհանուր վերլուծության արդյունքում, եկավ այն եզրակացության, որ բողոքարկողի փաստարները համոզիչ են և սպառողը չի կարող շփոթել «MINI NEXT» և «NEXT» ապրանքային նշանները՝ հաշվի առնելով ընկերությունների սպառման ոլորտները:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը ամբողջությամբ և բավարարել «Նեքսթ Ռիթեյլ Լիմիթիդ» ընկերության բողոքը՝ գրանցելով «NEXT» (հայտի համարը N 20090648) բառային ապրանքային նշանը 35-րդ դասի համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան